

ՀԵՅՆԷԻԳ

ՋԱԽԱՂ ԲԱԼՈՒՂԵԱՆԻ

I

„Aus meinen Thränen spiesen
Viel blühende Blumen hervor“.

Իմ արցունքից դուրս եկան
Շատ ծաղիկներ թարմագին
Եւ իմ հառաչք երգ դարձան—
Սոխակները երգեցին:
Եթէ սիրես ինձ, մանկիկ,
Բոլոր ծաղկունք քեզ կը տամ,
Լուսամուտից քո մօտիկ
Կ'երգէ սոխակն ամեն ժամ:

II

„Die Lotosblume ängstigt
Sich vor der Sonne Pracht“.

Նունուֆարին նեղացնում է
Ջերմ արևի շրջութիւնն—
Նա գըլխակոր ըսպասում է
Ջով գիշերին կիսաքուն:
Եւ սիրահար-լուսնեական նորան
Ջարթեցնում է իւր լոյսով,
Իսկ ծաղիկը—սիրոյ նըշան—
Փըռւում է մեղմ, ժրպտալով:
Նա ծաղկում է ու փայլում է,

Մունջ նայում է երկընթին,
 Նա բուրում է՝ արտասուում է
 Սիրոյ ցաւից տենդային:

III

„Liebste, sollst mir heute sagen,
 Bist du nicht ein Traumgebild...“

Այսօր, Հոգիս, պիտի ասես,—
 Չէս գու պատկեր ցնորալից
 Եւ տաք օրում Հնարած չէս
 Բանաստեղծի ուղեղից:
 Բայց այդպէս մի փոքրիկ բերան,
 Աչաց փալլը կախարդող,
 Ստեղծել այդպէս սիրուն մանկան
 Բանաստեղծը չէր կարող:
 Մեծ-մեծ օձեր, յարալեզներ,
 Կակղի որդեր, հըրէշներ
 Եւ այլ չ'եղած վատ գազաններ—
 Ահա նա ինչ կը ստեղծէր:
 Սակայն քեզ քո այդ նենգութեամբ,
 Քո այդ դէմքը սիրալիւր—
 Նայող խարդախ անմեղութեամբ
 Բանաստեղծը չի ստեղծիլ: